ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2024 թվականի N469-Ա

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՍԵՆ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՎԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՏՆՕՐԵՆ ՎԻՐԱԲ ՄԱՆԱՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2024 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 05/593 գրությունը՝

որոշում եմ.

1. «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արսեն Բաբայանին թույլատրել 2024 թվականի նոյեմբերի 19-ից 23-ը գործուղել Ֆրանսիայի Հանրապետության Օվերնյ Ռոն Ալպ նահանգ՝ երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր քննարկելու համար:

2՝ Արսեն Բաբայանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման ծախսերը թույլատրել կատարել «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

3. Գործուղման մեջ գտնվելու ընթացքում «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ընկերության փոխտնօրեն Վիրաբ Մանասյանին:

2024-11-15 15:12:36 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. նոյեմբերի 15
ք. Կապան